

Դոկտ. Ռուբինա Փիրումեան
Լու Անշեղիս

ՓՈՔՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ

Խոչընդոտ երկրի բացարձակ թրքացման դեմ¹

Կայսրութիւնը օսմանացնելու (Ottomanization) անյաշող արդիւնքից յետոյ, Երիտ. Թուրքերը ի գործ դրեցին թրքացման քաղաքականութիւնը (Turkification), որով եւ պիտի իրագործուէր «Թուրքիան թուրքերի համար» գաղափարախօսութիւն-նպատակը: 1915-ի կոտորածները, տեղահանութիւնն ու բռնի իսլամացումը այդ նպատակին էին ծառայում: Առաջին Աշխարհամարտի աւարտին յաջորդող շփոթի եւ անիշխանութեան մթնոլորտը կասեցրեց թրքացման թափը, որ իր նոր հունի մէջ մտաւ Թուրքիոյ Հանրապետութեան ստեղծման հետ զուգընթաց: Յատկանշական է, որ սկզբնական շրջանում տարուող թրքացման քաղաքականութեան մէջ, որպէս արդիւնք քեմալական աշխարհակա-նացման, կրօնը որոշ չափով իր դիրքերը զիջեց: Այնուամենայնիւ, նոյնիսկ Իս-մէթ Ինօսիլի իշխանութեան օրօք, Իսլամը սկսեց աստիճանաբար իր դիրքը գրաւել երկրի ազգային դիմագծի կենտրոնում: Ադնան Մենդերեսը աւելի զարկ տուեց դրան:

*Խունկար-մարտ 2010
 ԻԿԸ տարի, թիվ 1(29).*

Թրքացման քաղաքականութիւնը յամառօրէն տարւում էր բոլոր փոքրա-մասնութիւնների նկատմամբ եւ որոշ պարագաներում՝ բացարձակ բռնութեամբ: 1934 թուին գործադրուած ազգանունների թրքացման օրէնքը մի ազդու միջոց էր տարազան հասարակութեանը միատարր դարձնելու ճամբին: Այս հրա-մանագրով, օրինակ հայերի դէպքում, արգիլուեց կրել ազգանուն, որ հայկական հնչեղութիւն ունէր եւ ազգային պատկանելութիւն էր յիշեցնում:

Խտրականութեան եւ հալածանքի քաղաքականութեան եւ միեւնոյն ժամա-նակ երկրի հասարակութեան եւ տնտեսութեան թրքացման մէկ այլ դրսեւորում էր 1942-ի ոչ-Իսլամ ժողովրդի վրայ պարտադրուած արտառոց ու անհաշի ունեցումաձքի հարկը (varlik vergisi), որ ներառում էր նաեւ իսլամացած հայերին: Սա միջոց էր ծանր տուրքերով ոչ-իսլամներին, մանաւանդ՝ հայերին կողոպտե-լու եւ աղքատութեան մատնելու, նրանց տնտեսական ուժը ոչնչացնելու: Բոլոր նրանք, որոնք հնարարութիւն չունէին վճարելու, եւ պիտի ասել, որ շատերը՝ գուրկ էին այդ կարողութիւնից, արտորում էին դէպի արեւելեան մահանգներ՝

ԿԵԿ համահայկական համոզեա

1 Այս յօդուածը առնուած է 2009-ի Մարտ 14-ին, Լու Անշեղըսուն Հայկական Ցեղասպանութեան Ոգեկոչման Համագաղղութային Մարմնի կազմակերպած գիտաժողովին անգլերենով ներկայացուած ուսումնասիրութիւնից:

սուկալի պայմաններում պարտադիր աշխատելու եւ այդպիսով պետութեան «պարտքը» վճարելու: Աքտրավայրեր կային Էսփիշեհիը նահանգի Սիվրի-հիսար գաւառում, բայց ամենասուկալին Էրզրում նահանգի Աշքալէ գաւառի տարբեր ճամբարներն էին: Աշքալէ գիւղաքաղաքի բնակիչներից մէկը՝ Պապա Եուսուֆը, պատմել էր Քէմալ Եալչընին իր տեսած 300 հայ, յոյն ու հրեայ աքտրեւանների կրած տառապանքների մասին. «Ախոռները, սրճարանները ննջարանի վերածեցին: Քակոր, թրիք եւ այլն կը վառէին: Ամսէ ամիս կը վճարէին իրենց պարտքը: Շատ թշուառ վիճակ մը ունէին: Չկրցան ընտելանալ այստեղի եղանակին... Շատ ցուրտ էր: Չանոնք շարունակ աշխատցուցին»:² Տաժանակիր աշխատանքը շատերին մաշեցրեց. իսկ երբ մէկը մեռնում էր, յիշում է Պապա Եուսուֆը, հսկիչ տասնապետները անտարբերութեամբ ասում էին, «սատկելու գնաց»:²

Յետոյ եկան 1955-ի Սեպտեմբեր 6-7-ի պոգրոմները, ոչ-իսլամների վրայ յարձակումներ, կոտորած, բռնաբարում, սուների ու խանութների կողոպուտ, ւաերում ու հրդեհ: Կիպրոսի հարցի թէժ օրերն էին եւ Թուրքիոյ Իսլամ ժողովուրդը հրահրուեց յոյների դէմ իր վայրագ հակադարձը ցոյց տալու: Յարձակումները սկսեցին մի սուտ լուրի տարածումով՝ իբր յոյները ռուսը են նետել ու ւաերել են Սալոնիքում այն տունը, ուր ծնուել էր Աթաթուրքը: Իսլամ զանգուածները գազազած փողոց թափուեցին յոյներից վրէժ լուծելու, սակայն թիրախ դարձան նաեւ հայերը եւ երբեմն էլ՝ յատկապէս հայերը: Գրիգոր Ջէյհանը (Ջիհանեան) յիշում է այդ սարսափի օրերը Պոլսում, թէ ինչպէս կառավարութեան կողմից արտօնուած հանրահաւաքից յետոյ գրգռուած ժողովուրդը յարձակուեց ոչ-իսլամ բնակչութեան վրայ: Նպատակը յոյներին վնասելն էր, բայց հայերն ու հրեաներն էլ իրենց բաժինը ստացան: «Նոյն ժամերուն ոչնչացուցին Պոլիսն ու Իզմիրը: Առանց հրդեհուած, առանց քանդուած, առանց կողոպտուած յոյնի տուն, խանութ չմնաց: Յոյներուն քով հայերուն եւ հրեաներունն ալ հրդեհուեցան, քանդուեցան: Նոյն փողոցին մէջ յոյնի խանութին քով գտնուող թուրքի տան, խանութին ձեռք չտուին: Ամէն բան ծրագրուած, ոչ-իսլամներու տուններն ու խանութները նախապէս ճշդուած էին»:³

Ռոբեր Հատտեճեանը յիշում է հայ մտաւորականութեան ապրած յուսախաբութիւնը: Դեռ նոր էր սկսել որոշ չափով ազատութեան շունչ փչել: Նոր ու աւելի ազատ արտայայտութիւնների կարելիութեան յոյսեր կային: Հայկական հրատարակութիւնները բազմապատկուել էին: Հատտեճեանը յիշում է իր եւ Չարեհ Խրախունու այցը Սարգիս Թերզեանի տպարան. կոտորտուած մեքենաներ, դէս ու դէն շարտուած թղթեր, ու «Սան» թերթի յաջորդ համարի շարուած տառերը ցաք ու ցրի գետին թափուած: Տեսարանը ցաւալի էր, բայց աւելի ցաւալին, յարում է Հատտեճեանը, խորտակուած յոյսն էր դէպի աւելի լաւ ապագայ Թուրքիայում:⁴

Այս դէպքից յետոյ տեղի ունեցան ձերբակալութիւններ եւ դատավարութիւններ, բայց տնօրինուած պատիժները թեթեւ էին ու ձեւական: Ձերբակալուածներից՝ դէպքերի մէջ կարելուր դերակատար Օքթայ Էրզենը, օրինակ՝ կարճ ժամանակում ազատ արձակուեց եւ Նեւշեհիրի կառավարչի պաշտօն

² Քէմալ Եալչըն *Seninle Güler Yüreğim*, (2000), Իստանբուլ: Մէքբերումները՝ «Յոգիս քեզով կը խայտայ» Գրիգոր Արք. Պեթճեանի թարգմանութիւնից (Երեւան, 2003), էջ 101:

³ Նոյն տեղում, էջ 179:

⁴ Տե՛ս Ռոբեր Հատտեճեան, «Յուշատետր-15» (1999), էջ 160-61:

ստացաւ: Գէպի իրական պատասխանատուն, սակայն, ինքը՝ Ադնան Մենդերեսը եւ իր կառավարութիւնը, հաշուետութեան չկանչուեցին: Իսկ 1960-ին Մենդերեսի անկմանը յաջորդած դատավարութիւններում ակնարկ անգամ չեղաւ 1955-ի դէպքերի եւ մեծ թուով զոհերի ու տնտեսական հսկայ վնասների պատճառ դարձած նրա դերակատարութեան մասին:

1955-ի Սեպտեմբեր 6-7-ի պոգրոմների իրաւական կողմը ուսումնասիրող յօդուածում Ալֆրեդ դը Չայեսարը ցառով նկատել է տալիս, որ Մենդերեսի մեղադրականների շարքում կառավարական ֆոնտերի շարաշահումներն էին բերուած եւ 1955-ի դէպքերը չէին յիշուած, իսկ այդ դէպքերի ոստիկանական կամ պաշտօնական թղթածրար մինչ այսօր գոյութիւն չունի: Դը Չայեսարը նոյնպէս ցառով է արտայայտուած, թէ Թուրքիոյ երիտասարդ սերունդը շատ քիչ բան գիտէ 1955-ի պոգրոմների մասին եւ դեռ հակառակը՝ ի յարգանս Մենդերեսի յիշատակին՝ փողոցներ, դպրոցներ ու հաստատութիւններ նրա անունն են կրում:⁵

Թրքացման քաղաքականութեան յաջորդ բիրտ դրսեւորումը թրքերէնից բացի որեւէ այլ լեզու խօսելն արգիւելու՝ 1960-ականների արշաւն էր: Սա շեշտուած արձագանքն էր 1928-ից արմատ նետած կարգախօսի՝ *Vatandaş, Türkce Konuş!* (Համաքաղաքացի՛, թրքերէն խօսի՛ր): Յատկանշական է, որ 1965-ից սկսած, պետական մարդահամարի հարցախոյզից զեղչուել է անհատի մայրենի լեզուի մասին հարցումը:

Ա. Օմեր Թիւրքեշը Բենալ Եալչընի *Seninle Güler Yüreğim* (Հոգիս քեզմով կը խայտայ) գիրքը կարդալուց յետոյ էր իմացել 1955-ի դէպքերի մասին: Այդ գրքի մասին գրած գրախօսականում նա այսպէս է արտայայտուած, «ցատում եւ ցաւ ես զգում երբ մտածում ես, թէ հանրապետական Թուրքիայում ո՛չ միայն փորձ չեղաւ 1915-ի ցաւերը ամոքելու, այլ այդ ցաւերը աւելի խորացուեցին՝ 1942-ի *varlık vergisi*, 1955-ի պոգրոմների եւ 1960-ականների «թրքերէն խօսիր» կարգախօսը պարտադրող շեշտուած բրտութիւններով ու հալածանքներով: Ակնարկելով 1980-ի Սեպտեմբեր 12-ի պետական հարուածից յետոյ ձախ մտաւորականների ձերբակալութիւններին, Թիւրքեշը աւելացնում է, թէ միակ ժամանակ երբ հայերի ու թուրքերի հետ հաւասար վերաբերուեցին, դա բանտերում էր, դաժան չարչարանքների նկուղներում:⁶

Թուրք ազգայնական շարժումը նոր թափ եւ ուղղութիւն էր ստանում: 1969-ին ֆաշիստական կողմնորոշում ունեցող գնդապետ Ալփասլան Թիւրքեշը իր ծայրայեղ ազգայնական կուսակցութիւնն էր կազմում (*Milliyetçi Hareket Partisi* - Ազգային շարժում կուսակցութիւն), որից պիտի սերէր «Գորշ գայլեր» խմբակցութիւնը: Ծայրայեղ ազգայնական շարժումին միացաւ նաեւ Նեջմեթ-թին Էրբաքանը եւ իր նորաստեղծ կուսակցութիւնը (*Milli Nizam Partisi* - Ազգային կարգ կուսակցութիւն): Սիւլէյման Գեմիլիքի եւ Բուլենթ Էջեմիթի օրօք այս երկու կուսակցութիւնները կարեւոր մասնակցութիւն ապահովեցին երկրի ոստիկանական եւ ապահովական գաղտնի սպասարկութեան կառոյցներում:

5 Տե՛ս Ալֆրեդ դը Չայեսար, “The Istanbul Pogrom of 6-7 September 1955 in the Light of International Law” («1955-ի սեպտեմբեր 6-7-ի Իստանբուլի պոգրոմը միջազգային օրէնքի լոյսի տակ»), (2007): Պիտի աւելացնել, որ վերջերս հրապարակ է իջել *Guz Sancisi* (Տխուր աշուն) ֆիլմը, որ մի սիրոյ պատմութեան ընդմիջից անդրադառնում է 1955-ի դէպքերին. այնուամենայնիւ, արդիւնքը երբեք բաւարար չէ:

6 Գրախօսականը տե՛ս <http://www.pandora.com.tr/turkce/elestiri.asp?yid=251> կայքէջում (Յունուար 31, 2007):

Derin devlet-ը⁷ կազմում էր եւ իր քաղաքական ու ահաբեկչական ընդյատակեայ գործունեութիւնն էր տարածել, որ շարունակում է մինչեւ օրս: Բացայայտ իրողութիւն է, որ 1978 եւ 1993 ալեւիների կոտորածների օրերին «Գորշ գայլեր»ը, derin devlet-ի ահաբեկչական թելը, 1915-ի կոտորածները իրագործող Teşkilat-ı Mahsusa-ի (Յատուկ կազմակերպութիւն) դերն էր ստանձնել:

1980-ի զինուորական հարուածը եկաւ վերջ տալու ծայրայեղութեան հասած իսլամական շարժումին: Արդիւնքը, սակայն, ժամանակաւոր էր: Իշխանութիւնները դարձեալ հակուեցին դէպի Իսլամ՝ կիզակէտը թուրք ազգային գիտակցութեան: Թուրգութ Օզալը այս երեւոյթի մեծ դերակատարն էր: Փերրի Անդըրսընի կարծիքով, «Կրօնի վրայ հիմնուած ազգային ինքնութիւնը աւելի շեշտաւորուեց, երբ իսլամական սինթեզի թրքական տարբերակը տարածուեց իբրեւ դասագրքային ուսմունք»:⁸ Այսպիսով, թուրք ազգային ինքնութիւն հասկացողութիւնը խոր արմատներ էր նետում՝ ժխտելով ու ջնջելով Թուրքիայում ապրող նոյնիսկ իսլամ ժողովուրդների էթնիքական իւրայատկութիւնները:

1980-ի պետական հարուածին յաջորդած ձախերի հալածանքն ու ձերբակալութիւնները արմատախիլ արեցին մանաւանդ երիտասարդ մտաւորականութեան մէջ տարածում գտած շարժումը: Դա մահացու հարուած էր նաեւ քուրդ մտաւորականութեան նպատակներին: Նրանք յոյս ունէին քրդական վերածնունդը տարածել գոնէ համալսարանական միջավայրում: Յիրաւի, 1980-ի պետական հարուածից յետոյ քրդական հալածանքներն ու խտրականութիւնը նոր չափերի հասան՝ պարետային ժամեր երկրի հարաւ-արեւելքում, քրդերէնի գործածութեան արգիլում եւ քրդական լեզուի ու մշակոյթի դրսեւորումների խափանում ամբողջ Թուրքիոյ տարածքում: Այս ճնշումներն էին, որ Քրդական Բանուորական կուսակցութեանը (Partiya Karkeran Kurdistan, PKK– Քուրդիստանի բանուորական կուսակցութիւն) զինեալ պայքարի մղեցին: 1984-ին սկիզբ առաւ քրդական ապստամբութիւնը եւ միայն 1999-ին Դեմիրելին յաջողուեց խեղդել ու չեղքացնել անհանգստութիւնները, ինչ որ լիովին չէր կարողացել կատարել Օզալը: Վերջաւորութիւնը քուրդ ղեկավար Արդիլլահ Օջալանի ձերբակալումն ու բանտարկութիւնն էր:

Եւրամիութեան մէջ ընդունուելու փորձերը որոշ փոփոխութիւն մտցրին փոքրամասնութիւնների նկատմամբ թուրք կառավարութեան վարած քաղաքականութեան մէջ: Գոնէ առերեւոյթ մեղմացումը զգալի է մանաւանդ՝ քրդերի պարագային: Մասնաւոր դպրոցներում արդէն թոյլատրուում է քրդերէն դասաւանդել. կարելի է նաեւ որոշ հեռուստածրագրեր քրդերէնով մատուցել:

Ալեւիների դրութիւնը աւելի վատ է: Շարունակական հալածանք ու խտրականութիւն, որի մասին աշխարհը այնքան էլ տեղեակ չէ: Այս կրօնական եւ ոչ-էթնիքական խմբաւորումը ընդհանրապէս ներկայացուած է իբրեւ հերետիկոսների, Շիի-ներից է՛լ աւելի անընդունելի, նոյնիսկ աթէիստների հաւաքածոյ: Այսօր Թուրքիայում ապրում են 10-12 միլիոն ալեւիներ, որոնցից 2-3 միլիոնը ծագումով քրդեր են եւ ով գիտէ՝ որքանը քրդացած հայեր:

7 Թարգմանաբար կարելի է խորքային պետութիւն կոչել՝ պետութիւն պետութեան մէջ հասկացողութեան համեմատուող այս գաղտնի խմբակցութիւնը, որ կազմուած է երկրի ղեկավար կառոյցների մէջ գործող ազդեցիկ պաշտօնատարներից: Ոչ-ժողովրդավարական սկզբունքներով ղեկավարուող այս խմբակցութիւնը ուժի եւ բրտութեան միջոցով իր նպատակներն է պարտադրում, նպատակներ, որոնք, իր կարծիքով, երկրի շահին են եւ ի հարկէ դեմ՝ ոչ-թուրք փոքրամասնութիւններին: Անժխտելի է նաեւ Ergenekon ահաբեկչական գաղտնի կազմակերպութեան կապը այս խմբակցութեան հետ:

8 Փերրի Անդըրսըն, “After Kemal” (Քենալից յետոյ), London Review of Books, 25 սեպտեմբեր, 2008.

Հակառակ քրդերին, որոնք ցրուած են ամբողջ երկրում, ալեիները աւելի կենտրոնացած են միջին-արեւելեան տարածամասում՝ Չորումից Մուշ: Կրօնը այս խմբակցութեան գաղափարախօսութեան մէջ մեծ դեր չի խաղում: Ալեի ինքնութեան հիմքում մարդասիրութիւնն է եւ համաշխարհային իղեակները:

Բոլոր ազգային եւ կրօնական փոքրամասնութիւնները միասին Թուրքիոյ բնակչութեան մէկ երրորդն են կազմում. ուրեմն, ինչպէս Փերրի Անդրսընն է նշում, ժողովրդի մէկ երրորդը շարունակական խտրականութեան տակ է գտնուում: Ուժով պարտադրուած ճուլումը թուրք հասարակութեան մէջ, այսինքն՝ ջնջումը ինքնութեան, որ է՝ լեզուի, մշակոյթի եւ ազգային պատկանելութեան, ընթանում է համատարած բոլորի վրայ, դրանք լինեն ոչ-թուրք մուսուլմաններ, ինչպէս քրդերը, լազերը, արաբները, չերքեզները եւ չեչենները, կամ ոչ-մուսուլմաններ, ինչպէս հայերը, յոյները եւ հրեաները:⁹

Թրքահայ փոքրամասնութեան նկատմամբ տարուող քաղաքականութեան փոփոխութիւնը այլ արմատներ ունի եւ այլ ուղղութեամբ է զարգացել: Կարելի է ասել, թէ դա կապուած է եղել Հայոց Յեղասպանութեան ճանաչման համար 1970-1980-ական թուականներին Սփիւռքում տարուող քաղաքական եւ զինեալ պայքարին: Որպէս հակադարձ, այդ տարիներին թուրք իշխանութիւնը հրապարակը հեղեղեց ուրացման գրականութեամբ, որ իր ուղին գտաւ նաեւ դայրոցական դասածրագրերի մէջ: Թուրք պատանին սովորեց ատել հայերին, որոնք Օսմանեան կայսրութեան թշնամիներին էին միացել ու փորձել էին կայսրութիւնը տապալել:

Թաներ Աքչամը իր հարցազրոյցներից մէկում վկայում է իր ստացած դաստիարակութեան մասին:¹⁰ Նման բացատրութիւն է տալիս նաեւ Օսման Քեօքերը 2005-ին իր կազմակերպած «Իմ սիրելի եղբայրս» բացիկների ցուցահանդէսի առիթով Ֆրանս Պրեսի թղթակցին տուած իր հարցազրոյցում:¹¹ Իսկ Հուլիա Ադաքը, հետեւելով Թալեաթ Փաշայի յուշերի հրատարակման ու վերահրատարակման թուականներին, եզրակացնում է, որ ամէն անգամ, երբ հայկական հարցը միջազգային ուշադրութեան էր արժանանում, թուրք իշխանութիւնները շուկան լեցնում էին Թալեաթի յուշերով (1921, 1945, 1986, 1990, 2005, 2006)՝ դրանով ձեւատրելու ու վերածեւատրելու թուրք հասարակութեան

9 Ըստ Wikipedia հանրագիտարանի տուեալների, առնուած Թուրքիայի երեք համալսարանների պրոֆեսորների 2008-ին Ազգային Ապահովութեան հտրիրդի համար պատրաստած զեկուցման, Թուրքիոյ բնակչութիւնը հետեւեալ պատկերն է ներկայացնում. 50-55 միլիոն եքմիք թուրքեր, 12.5 միլիոն քրդեր, 2.5 միլիոն չերքեզներ, 2 միլիոն բոսնիացիներ, 1.3 միլիոն ալբանացիներ, 1 միլիոն վրացիներ, 870,000 արաբներ, 700,000 ռոմաներ կամ ռոմանիներ (զնչուների ցեղ), 600,000 պոմակներ (ժամանակակից իսլամացած բուլգարացիներ), 80,000 լազեր (մեծ մասամբ Սեւ ծովեան ափերում), 60,000 հայեր, 20,000 հրեաներ, 15,000 յոյներ եւ 13,000 համշէներ: Ձեկուցագրում չեն յիշուել զազաները, որոնք գոյութիւն ունեն անյայտ թուով (եքմիքական տեսակետից արիական, իրանական, կրօնով՝ ալեի կամ սիւննի). Սրանք, աւելի մեծ հաւածանքների ենթարկուելով, թողել են իրենց բնակավայրերն ու հեռացել, մասամբ էլ ձուլուել: Տես “Demographics of Turkey” (Թուրքիայի ժողովրդագրութիւնը) յօդուածը: Ձեկուցագրում նշուած թուերից հայկական ծագում ունեցող, մեզ հետաքրքրող համշէների քանակը բաւական անտրամաբանական է թւում: Բազմաթիւ ուսումնասիրութիւններ համշէների ներկայ թիւը նշում են 3-400.000, որոնցից հաւածանքներ կէսը քրիստոնեւներ են եւ ապրում են Թուրքիայից դուրս. իսկ միւս կէսը Իսլամ կրօնին են հետեւում եւ այսօր, բացի իրենց ասանդական բնակավայրերը ցրուած են ամէն տեղ: 10 “Is It Still Genocide if Your Allies Did It?” (Արդեօք դա դեռեւս ցեղասպանութիւնն է, եթէ դա քո դաշնակիցներն են կատարել). Հարցազրոյցը վարել է Փիթըր Շիլլինգը, Minnesota Law and Politics, թերթում, տե՛ս հետեւեալ կայքէջը <http://www.lawandpolitics.com/minnesota/Is-It-Still-Genocide-if-Your-Allies-Did-It/cef7381e-fe46-102>. (12/27/2007).

11 Տես “Turkey Begins Self-Reflection Over Armenia” (Թուրքիան Հայաստանի նկատմամբ ինքնախոնարհութիւն է սկսում), հարցազրոյցը վարել է Նիքոլա Շեիրոնը. աղբիւրը՝ www.Armeniapedia.org

վերաբերմունքը հայկական հարցի նկատմամբ:¹² Թրքական քարոզչական մեքենայի վերջին ձեռքբերումներից է պատմությունը խեղաթիւրող եւ հայերի նկատմամբ ատելութիւն սերմանող «Սարի գելին» ֆիլմը, որ նախատեսուած է կրթական համակարգի համար:

Այնուամենայնիւ, այսօր մեծ է թիւը այն թուրք մտաւորականների, որոնք հարցադրումի են ենթարկում թուրք իշխանութիւններին՝ անցեալը չորանալ եւ պատմութեան հանդէպ իրենց դիրքը հաստատ պահելու սիրոյն հասարակութեան միտքը խաբէութիւններով չողողել:¹³ Այս ազատախոհ մտաւորականները իրենց ինքնութեան փնտրտութի մէջ մերժում են ընդունել իշխանութիւնների պարտադրած «թուրք ազգային ինքնութիւնը»: Նրանք հաւատացած են, որ ազգային ինքնութեան մէջ կրօնին այսքան ծանրակշիռ կարեւորութիւն տալով, իշխանութիւնները վնաս են բերում ժողովրդին ու գրկում են նրան իր իրական ինքնութիւնը գտնելու հնարաւորութիւնից:

Օրհան Փամուրը հաւատում է, որ այս բազմազանութիւնը միշտ գոյութիւն է ունեցել, եւ յաջորդական իշխանութիւնները փորձել են սպանել այն. «Մեծ է թիւը այն հեղինակատր քաղաքագէտների, որոնք ժամանակի ընթացքում փորձել են մէկ էութիւն, մէկ ապրելակերպ պարտադրել Թուրքիոյ վրայ: Որոշները՝ զինուորական միջամտութեամբ Արեւմտեան աշխարհականացում են բերել. ուրիշները ցանկացել են Թուրքիան տեսնել յալիտենապէս աւանդական եւ իսլամական: Նման մօտեցումը կործանում է ժողովրդավարութիւնը Թուրքիայում ... Այս էութիւնները տեսական երկխօսութեան մէջ պիտի մնան, վիճեն իրար հետ ու փոխեն իրար»:¹⁴

Պարզ է, որ այս մտաւորականները ենթակայ են անդադար յարձակումների ու հալածանքի: Հրանտ Դինքի սպանութիւնը մէկ ցաւալի դրսեւորումն էր այս երեւոյթի: Նա համարձակուել էր ասելու, թէ ինքը Թուրքիայից է, բայց թուրք չէ, հայ է: Նա համարձակուել էր ասելու, թէ ինչ որ կատարուեց 1915-ին, ոչ այլ ինչ էր եթէ ոչ ցեղասպանութիւն: Եւ վերջապէս, նա համարձակուել էր յայտարարելու, թէ թուրք կարծուած հերոսուհի, ռազմական օդաչու,¹⁵ Աթաթուրքի հոգեգաւակ, եւ թուրքերի պաշտամունքի առարկայ Սաբիհա Գեօքչենը 1915-ի հայ որբերից է եղել:

Դինքի սպանութիւնը սթափեցրեց ազատախոհ մտաւորականութեանը, որը այնուամենայնիւ ճշմարտութեան փնտրտութիւնը պեղում է անցեալը: Նոր հրատարակութիւնները Թուրքիայում տարբեր մօտեցումներով, տարբեր դատումներ են կատարում. օրինակ՝ Իստանբուլի Թուրք Պատմական Ընկերութիւնը, որ անջատուել է Անքարայի մայր կազմակերպութիւնից, *From Subject to Citizen in 75 years* (Հպատակից՝ քաղաքացի 75 տարուայ ընթացքում, 1999) հրատարակութեան մէջ խօսում է հայերի տեղահանութեան մասին:

Ֆաթմա Միւզէ Գեօշէքի կարծիքով, սա առաջին փորձն է հայութեան տեղահանութիւնը բռնի գաղթի անուան եւ մանաւանդ՝ ընդհանուր գաղթերի

12 Տե՛ս Դուլիա Ադաք, “Identifying the ‘Internal Tumors’” (Ճանաչենք «ներքին ուռուցքները»), (2007):

13 Այս դիրքորոշումը պէտք չէ մեկնաբանել իբրեւ արտացոլքը Դայոց Ցեղասպանութեան ճշմարտութեան ճանաչման: Այս մտաւորականների մեծ մասը պարզապէս Թուրքիոյ անցեալը պեղելու եւ փոքրամասնութիւնների հանդէպ արդար վերաբերմունքի պահանջն է կատարում: Եւ այդ բոլորը ի սեր ժողովրդավարութեան, որ բացակայում է երկրում:

14 Մէքբերումը NPQ 24:3 (Ամառ, 2007) հարցազրոյցից, էջ. 11.

15 Ըստ որոշ աղբիւրների, Wikipedia, online Encyclopedia կամ Notablebiographies.com, Սաբիհա Գեօքչենը (1913-2001) իրօք առաջին կին ռազմական օդաչուն է եղել աշխարհում:

վերտառութեան տակ ներկայացնելու, եւ վերջապէս առաջին փորձն է տարիների բացառումից յետոյ Թուրքիոյ պատմութեան մէջ հայերին եւս ներառելու: Բոլոր պարագաներում, սա հեղինակի ընտրած ուղին է՝ նկարագրելու այն «դեմոգրաֆիկ փոփոխութիւնները», որոնք այսօրուայ միատարր հասարակութեան առաջացմանը սատարեցին եւ հիմնականում ներկայացնելու Հայոց Յեղասպանութիւնը՝ իբրեւ բռնի գաղթ, որ տեղի ունեցաւ «ոչ-բարեկաատ» պայմաններում:¹⁶

Նոյն հրատարակութեան մէջ բռնի գաղթի թեման շօշափող յօդուածի հեղինակ Աքիլէ Գիւրսօյը գրում է, թէ «Ա. Աշխարհամարտի ընթացքին, 1915-ի զարմանը, Երիտ. Թուրքերը որոշեցին պարտադրել հայերին երկրից դուրս գաղթելու... Որոշ հայեր էլ Թուրքիան թողեցին հանրապետութեան հիմնադրումից յետոյ»:¹⁷ Այսպիսով, հեղինակը լուծում է հայ բնակչութեան թուի հարցը. ուրեմն, շուրջ երկու միլիոն նախքան պատերազմը, 60,000 այսօր, մնացեալը գաղթել են:

Հակառակ փոքրամասնութիւնների նկատմամբ տարուող առերեւոյթ մեղմ քաղաքականութեան, Ռեջեբ Թալիպի Էրդողան-Արդիւլլահ Գիւլ կառավարութիւնը անշեղօրէն երկրի թրքացման ճամբան է շարունակում: «Սէկ Դ-օշ, Սէկ Ազգ, Սէկ Լեզու, Սէկ Պետութիւն» մինչ այսօր կրկնուող կարգախօսը արտայայտիչն է հասարակութեան վրայ պարտադրուած գաղափարախօսութեան: Այդ գաղափարախօսութիւնից շեղուելը ոճիր է եւ պատժելի 301 յօդուածով: Բասքին Օրանն էլ մէկն է դատապարտուածներից: Նրա յանցանքը՝ վերատրանք Թուրքիայի եւ թրքութեան դէմ: Երախորհրդարանին ներկայացնելու համար վարչապետի կողմից ապապրուած եւ 2006 թուին պատրաստուած երկրի մարդկային իրաւունքների հարցի մասին զեկուցագրի մէջ Օրանը նշել էր, թէ Լօզանի համաձայնագրի նախատեսումներն ու պայմանները չեն գործադրում փոքրամասնութիւնների նկատմամբ եւ նոյնիսկ մարդկային իրաւունքների ուժեղ խախտումներ են տեղի ունենում հենց նաեւ թուրքերի դէմ: Օրանը դատապարտում էր, քանի որ գործածել էր *Türkiyeli* ձեւը, որ նշանակում է մարդ՝ Թուրքիայից կամ՝ Թուրքիայի քաղաքացի, մի եզր որ կարող է ցեղային կամ կրօնական տարբերութիւնների իմաստ տալ, փոխանակ *Türk*, որ պարզապէս գերինքնութիւն է առանց ոչ մի զանազանութեան:

The Great Game of Genocide: Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians (Յեղասպանութեան մեծ խաղը. կայսերապաշտութիւն, ազգայնականութիւն եւ օսմանեան հայերի կործանումը) իր վերջին գրքում Դանըլդ Բլաքսհամը գրում է. «Թուրքիան յամառօրէն ստել է իր անցեալի մասին, իր ստերի հաստատման ու առաջացման համար ուժ ու սպառնալիք է գործածել իր փոքրամասնութիւնների եւ այլ պետութիւնների դէմ, հայերին ջնջել է իր պատմութեան գրքերից»:¹⁸ Այս բոլորով հանդերձ ու ի հեճուկս այն իրողութեան, որ խտրականութիւնն ու հալածանքը փոքրամասնութիւնների դէմ դեռ շարունակուում են, անդրժելի երեւոյթ է փոքրամասնութիւնների ազգային ու

16 Տե՛ս Ֆաթմա Միւզէ Գեօշեք, "Silences in the Turkish Republican Past: An Analysis of Contemporary Turkish-Armenian Literature" (Լռութիւններ Զանրապետական Թուրքիոյ անցեալում. վերլուծում թրքահայ ժամանակակից գրականութեան), անտիպ:

17 Նոյն տեղում:

18 Դանըլդ Բլաքսհամի *The Great Game of Genocide: Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians* (Յեղասպանութեան մեծ խաղը. կայսերապաշտութիւն, ազգայնականութիւն եւ օսմանեան հայերի կործանումը) գրքից մեջբերումը տե՛ս Փերրի Անդըրսըն, "After Kemal" յօդուածում:

կրօնական ինքնութեան խորացումն ու ատելի շեշտաւորումը. երեւոյթ՝ որ ճգնաժամի է յանգեցրել թուրք ազգային գեր-ինքնութեանը: Երիտ. Թուրքերից ժառանգած ու հանրապետական շրջանում անշեղօրէն ի գործ դրուած թրքացման քաղաքականութիւնը (Turkification) ձախողել է: Պետութեան համար այլեւս հնարաւոր չի ուրանալ Թուրքիոյ ազգային ու կրօնական բազմազանութեան առկայութիւնը եւ փոքրամասնութիւնների ազգային ինքնութիւնը: Դա պարտադրում է ներսից ու դրսից: Անդրժելի երեւոյթ է նաեւ աստիճանաբար խորացող մղումը՝ արգիլուած անցեալի պատմութիւնը պեղելու: Պետութեան համար այլեւս հնարաւոր չէ հաշուի չնստել անցեալի հետ: Դա եւս պարտադրում է ներսից ու դրսից:

Summary

The Ethnic Identities of Minorities in Turkey A Challenge Against the Government's Policy of Turkification¹⁹

*Rubina Perroomian, Ph.D.,
California, Los Angeles*

After a period of confusion at the end of World-War I, the Turkification of the ethnic and religious minorities in Turkey resumed in the Republican era. Kemalist secularization downplayed religion, but as soon as the days of Ismet İnönü, Islam began to slowly make its way into the center of the Turkish national discourse.

The policy of Turkification was pursued across all ethnic groups, in many instances resulting in persecutions and discriminatory treatment of the non-Muslim minorities. The 1934 decree to abolish non-Turkish surnames was a powerful strategy of Turkifying and homogenizing the diverse society. So was the 1942 wealth tax (*varlık vergisi*) which forced non-Muslims out of business by disproportionate and discriminatory taxes. Those who could not pay were exiled to labor camps. Then, it was the 1955 pogrom, organized in response to the Cypress issue. Greeks were the intended target, but Armenians and Jews too suffered the angry mob's looting, raping, killing, burning of houses, and destruction of properties. As Rober Haddejian puts it, more painful than all that wreckage, was the shattering of Armenian hopes for a better future in Turkey. Adnan Menderes, the main organizer of these pogroms, was convicted and put to death for accusations unrelated to these pogroms and the tremendous destruction and death they caused. The next peak event in the process of Turkification and the government's trampling on the rights of ethnic minorities was the 1960s campaign to prohibit the use of any language but Turkish. Significantly, beginning in 1965 the State Institute of Statistics omitted the question from the census concerning a person's mother tongue.

The suppression of minorities in Turkey amplified by the rise of ultranationalist, Islamist elements and their involvement in the republic's political process as well as their clandestine terrorist activities. Their covert manipulations and coercions in the

¹⁹ This article is based on a study that was presented at the "Symposium on Armenian Genocide Recognition and Beyond," March, 14 2009 in Los Angeles.

name of nation's interests are referred to as the workings of the deep state (derin devlet). The Islamist movement was briefly halted by the 1980 coup, but was resumed and, as Perry Anderson puts it, was reinforced by the Turkish Islamic synthesis as textbook doctrine. In the aftermath of the 1980 coup, repression against the Kurds took a new dimension: martial law in the south-east, a ban on using the Kurdish language and any cultural or political expressions of Kurdish identity spread over the entire country. This augmented repression pushed the Kurdish Workers party, towards paramilitary activities and an insurgence in 1984.

Acceptance in the European Union has brought about the government's change of attitude toward minorities, especially Kurds who are in the spotlight more than others. Alevis remain in a worse condition. They are accused of "heterodoxy worse than Shiism," even atheism. All the ethnic and religious minorities together figure one third of the entire population, and thus, as Perry Anderson puts it, one third of the population in Turkey is under systematic discrimination. Forced assimilation into the mainstream Turkish society—identity, culture, language, ethnicity—is in process engulfing all citizens of Turkey, be they non-Turk Muslims—Kurds, Lazs, Arabs, Circassians, Chechens—or non-Muslims such as Armenians, Greeks, and Jews.

In the case of the Armenian minority, the change to the worse occurred in the last two or three decades, and that is because of the political activities and armed struggle (the so called terrorist actions) of Diaspora Armenians for the world recognition of the Armenian Genocide. To counter these activities, the Turkish government fed its citizens with lies denying the Armenian claims, teaching them to hate Armenians. Taner Akçam, Osman Köker and many other Turkish intellectuals are trying to persuade the government to recognize the diversity of the Turkish society. Orhan Pamuk tries to show the importance of the multiethnic, multicultural society that existed in Turkey and the successive governments have tried to kill that. These intellectuals are digging for the truth in the past and are consequently harassed and persecuted. Hrant Dink's assassination is a sad proof of that.

Moderate approaches to the history of Modern Turkey constitute the inclusion of the Armenian experience in the Turkish republican history, albeit showing the Armenian Genocide as forced migration. Significant among these publications is *From Subject to Citizen in 75 Years* (1999)

Contrary to the present day show of leniency toward minorities, however, the Erdogan-Gül government follows the criteria of Turkification. "One Flag, One Nation, One Language, One State" continues to be the slogan and the ideology enforced on Turkish society. Digression from that ideology is considered a criminal offense and is prosecuted under article 301.

Despite the fact that discriminatory treatment of ethnic and religious minorities is still a continuing reality in Turkey, the ever deepening of the sense of ethnic and religious identity is also a reality which has no doubt created a crisis in the Turkish supra-identity. The policy of Turkification has failed, and the government is no longer able to distort and falsify the diversity and enforce its own prescribed "national identity".

ԺՌՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԻԿ(Ը) ԳՍԱՐՔԻ ՔԻՂ 1(29), ԽՈՒՆԻՍԻԱԿԱՆ-ԺՈՒՐՆԱԳ 2010

ՎԵՐ ԽԱՄԽԱԿՅԻՒԿՈՒՆ ԽԱՍՆՔԻՆ